

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Մարզի խորհրդի նիստը վարում էր ՀՀ Կոտայքի մարզպետ Կ.Շահագալյանը

ք.Հրազդան

24.05.2012թ., ժամը՝ 11⁰⁰

ՄԱՄՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

- Մարզի խորհրդի անդամ 67 համայնքների ղեկավարներից 55 - ը /բացակայում էին Արովյան, Եղվարդ, Ֆանտան, Արզնի, Բալախովիտ, Նոր Գյուղ, Պտղնի, Սևաբերդ, Արզնի, Նոր Երզնկա, Պողոսյան, Քասախ համայնքների ղեկավարները/
- Վ.Բակլայան, Լ.Միքայելյան, Ա.Ղազարյան - ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալներ
- Մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ
- Ա.Բախչյան- ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1.Մարզի համայնքների բյուջեների 2012 թվականի սեփական եկամուտների պլանային ցուցանիշների համեմատականը:

/զեկուցող՝ ՀՀ Տարածքային կառավարման նախարարի տեղակալ Ա.Բախչյան/

2.Մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ընթացքը:

/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լ.Նահապետյան/

3.Մարզի առաջին եռամսյակի սոցիալ-տնտեսական վիճակի վերլուծություն:

/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժին պետ Ն.Մարգարյան/

4.Համայնքների ղեկավարների կողմից կազմվող նախագծման առաջադրանքի և վերջինիս հիման վրա մշակվող համայնքների գլխավոր հատակագծերի և գոտևորման նախագծերի համաձայնեցման աշխատանքների իրականացման մասին:

/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Վ.Թադևոսյան/

5.Հանրակրթությունից դուրս մնացած երեխաների կրթական իրավունքի պաշտպանության և ստեղծված իրավիճակի վերլուծության մասին:

/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ընդհանրի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ա.Պետրոսյան/

6.Այլ հարցեր:

6.1. Հողային օրենսդրության բնագավառում ընդունված նոր օրենսդրական և ներթաօրենսդրական ակտերի մասին:

/գեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Լ. Պետրոսյան/

6.2. Համայնքների ՔՊ պլանների հաստատման մասին:

/գեկուցող՝ Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ Գ. Գրիգորյան/

ԼՄԵՑԻՆ՝

1. ՀՀ Տարածքային կառավարման նախարարի տեղակալ Ա.Բախշյանի վերլուծությունը մարզի համայնքների բյուջեների 2012 թվականի սեփական եկամուտների պլանային ցուցանիշների համեմատականի մասին:

Զեկուցումն ընդունվեց ի գիտություն:

Ա.Բախշյանը պատասխանեց համայնքների ղեկավարների կողմից բարձրացված հարցերին:

2. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լ.Նահապետյանի գեկուցումը մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի մասին:

Զեկուցումն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

3. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժին պետ Ն.Մարգարյանի վերլուծությունը մարզի առաջին եռամսյակի սոցիալ-տնտեսական վիճակի մասին:

Զեկուցումն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

4. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Վ.Թադևոսյանի գեկուցումը համայնքների ղեկավարների կողմից կազմվող նախագծման առաջադրանքի և վերջինիս հիման վրա մշակվող համայնքների գլխավոր հատակագծերի և գոտևորման նախագծերի համաձայնեցման աշխատանքների իրականացման մասին:

Զեկուցումն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

5. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ա. Պետրոսյանի գեկուցումը հանրակրթությունից դուրս մնացած երեխաների կրթական իրավունքի պաշտպանության և ստեղծված իրավիճակի վերլուծության մասին:

Զեկուցումն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

6. Այլ հարցեր:

6.1. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Լ. Պետրոսյանի կողմից համայնքների ղեկավարներին ներկայացվեց տեղեկատվություն հողային օրենսդրության բնագավառում կատարված փոփոխությունների վերաբերյալ:

6.2. Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ Գ.Գրիգորյանի հայտարարությունը մարզի համայնքների կողմից ՔՊ պլանների հաստատման անհրաժեշտության մասին:

ԱՌԱՋԱՐԿԱՐՎԵՑ՝

Համայնքների ղեկավարներին՝

1.Մարզպետարան ներկայացնել համայնքներում խոշոր ապառքներ ունեցող սեփականատերերի ցուցակները:

2.Ձեռնարկել միջոցներ հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի գանձումը 100%-ի հասցնելու նպատակով:

/ժամկետը մինչև 01.06.2012թ. /


3.Համայնքների գլխավոր հատակագծերի նախագծային առաջադրանքները կազմելիս համաձայնեցնել մարզպետարանի քաղաքաշինության վարչության հետ:

4.Աշխատանք տանել համայնքների սոցիալապես անապահով, խնդրահարույց ընտանիքների հետ՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով դպրոցահասակ երեխաներ ունեցող արտագաղթող ընտանիքներին: Բարձրացնել հոգաբարձության և խնամակալության հանձնաժողովի աշխատանքների արդյունավետությունը՝ ամրապնդելով հանձնաժողովների փոխադարձ կապը դպրոցների և ընտանիքների հետ:

ՀԱՆՁՆԱՐԱՐՎԵՑ՝

Համայնքների ղեկավարներին՝

6.1.Համայնքների ՔՊ պլանները, մինչև 15.06.2012թ., օրենքով սահմանված կարգով ներկայացնել հաստատման:


Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ